

Ռ. Արայան

ԲՈՒՇԵՎԻԿԻ ԿԵՐՊԱՐԸ Ա. ՖԱԴԵԵՎԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՎԱՐԴԻԱ»
Վ Ե Պ Ո Ւ Մ

1

Ալեքսանդր Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա» վեպում առաջնա-
կարդ տեղ ունեն երեք բուլղարների՝ Շուլզայի, Վալկոյի և Պրոցենկոյի
կերպարները:

Երանցից առաջինը, 15-ամյա Մատվեյ Կոնստանտինովիչ Շուլզան, կամ
Կոստիկինը, Կրասնոդոնի նախկին հանքագործ է, 1918—20 թվերի պար-
ախզանական շարժման մասնակից: Իսա ֆիզիկապես ուժեղ ու հոգեպես ա-
ռողջ սարդ է, պարզ ու սրտաբաց բնավորությամբ, համառ ու ինքնավըս-
աահ, հավատացած, որ կարող է գլուխ բերել այն ամենը, ինչ պահանջում
է իրենից կյանքը: Նա շատ բան է տեսել ու շատ դժվարություններ, հաղ-
թահարել կյանքում և այդ տոկունությամբ է առաջ բերել նրա մեջ ու դոր-
ծոն եռանդով լցրել նրա ամբողջ էությունը: Մատվեյ Կոնստանտինովիչը
իր կոչումը դրել է հենց իր եռանդի այդ բաղադրողմանի. հասարակական-
րեն օգտակար դործադրության մեջ:

Սակայն Կոստիկինը միշտ եղել է մնացել է խորապես կենսուրախ
մարդ. նույնիսկ ամենադժվարին ժամանակներում ու ամենալարված պա-
հերին նրա մեջ հանդես է գալիս կյանքի հաճույքների ու գեղեցկության
լիակատար, անկաշկանդ ընկալման ձգտումը: Գտնվելով գերմանացիների
դեմ ընդհատակյա շարժումը ղեկավարելու համար Կրասնոդոնում որևէ
տեղ կանգ առնելու անհրաժեշտության առաջ, նա իր քայլերն ուղղում է
իր հին դինակցի և ուսուցչի, Լեոնիդ Ռիբալովի քրոջ, Լիդայի տան կողմը,
որին շատ հավանելիս է եղել երիտասարդ ժամանակ. նա ինքն իրենից
չի թաքցնում, որ կուզենար այդ դժվարին ու դժան աշխատանքի ծանր
որերը գեղադարձել սիրելի կնոջ հետ ունեցած հանդիպման նորոգ ուրա-
խությամբ: Նույն Շուլզան ոչ միայն զարմանքով, այլև նախանձով է դի-
տում հրաժեշտի համարույրով ինքնամոռաց երիտասարդ տղային և աղջ-
կանը («Այ սատանի ճուտեր» բացականչում է նա):

Շուլզան սենտիմենտալ չէ, բայց ոչ էլ չոր մարդ. ընդհակառակը, նա
շատ զգայուն մարդ է. «Երջանկության արցունքներ են ջերմանում նրա
կրծքում», երբ նրա բանտասենյակը մուտք դործած պատանին հայտնում
է, որ բարեկամները մտահոգվում են նրա աղատադրման վերաբերմամբ:
Հոգեպես տանջվում է նա իր երիտասարդության թարեկամից, Լիդայից ան-
վայել կերպով վիրավորվելու համար, որը և ի վերջո բերում հասցնում է
նրան բանտ՝ հայրենիքի հանդեպ իր պարտքը չկատարած:

Համոզիչ է պատկերված վեպում Շուլզայի այս առաջին լուրջ վրիպու-
մը: Չափազանց շեշտակի դուրս եկավ այդ պահին անհամաձայնությունը

այդ հանդիպման վերաբերյալ իր փայփայած պատկերացման և իրականության միջև, երկու անձնվեր ու իրար հարգող մարդկանց յաջերն ու տրամադրություններն այդ բոլորին կարծես իրար դուգահեռ էին ընթանում և գրա համար էլ համընկնել չէին կարող. ու բարեկամները հեռացան դժողո՛ւ իրարից և ամեն մեկն՝ ինքն իրենից:

Շուլիզային վիճակված էր հեռանալ և երկրորդ՝ իրեն անձնապես ծանոթ մարդուց, չին պարտիզան Գնատենկոյից կամ Կոնդրատովիցից: Այնուամենայնիվ թվում, է թե Շուլիզան չէր կարող Գնատենկոյին ասել իր անշափ դաժան խոսքերը (եղու հասկանում ես, որ դու մեզ մի տեսակ դավաճանել ես): Ո՛րչո՛ւ է, Շուլիզան բաց ճակատ ու տաքարյուն մարդ էր, և այդ բոլորին նա հողեպես ճնշված էր ոչ միայն ընդհանուր գրոթյամբ, այլև հենց նոր ապրած հիասթափության հետևանքով: Սակայն հենց այդ նույն ձախողումն էլ պետք է ավելի հանդարտ դատողականության ու ավելի ժեժ գգուշավորման ղրդեր նրան իր հաջորդ քայլերը կառարելիս: Շուլիզայի անցած ամբողջ կենսական ուղին պետք է սովորեցրած լիներ նրան այդ: Ահա թե ինչու այդ պահին նա չէր կարող ասել այդ ծանր խոսքերը, առանց հետաքրքրվելու, թե ինչն է պատճառը, որ Կոնդրատովիչը հրաժարվում է իր տանը պահել նրան: Այդ դեպքում, և դա ավելի համոզիչ կլիներ, Շուլիզան կարող էր բաժանվել Կոնդրատովիցից իր հավատար չխախտած նրա վերաբերմամբ, և ծերունին էլ՝ նրանից չնեղացած: Այդ զառն դժգոհությունների համար իրոք որ ոեալ հող չկար, թեկուզ և այդ չէր ազդի իրերի հետագա ընթացքի վրա:

Այդպիսով, ինչքան էլ որ չի ցանկացել հեղինակը, — ինչ որ նա ամենին չի խուսափում արահայտել, — Շուլիզան իրերի ներքին տրամաբանությամբ պետք է կատարեր իր երրորդ, ճակատագրական քայլը՝ աղետին ընդառաջ, դնար անծանոթ մարդու, Իգնատ Ֆոմինի մոտ:

Անհնարին է մեղադրել Շուլիզային նրա համար, որ նա անմիջապես չկահեց, թե ով է Ֆոմինը, որին ուրիշներն էին հանձնարարել իրեն, քանի որ Ֆոմինը առաջին հանդիպման ժամանակ բացասական տպավորություն չգործեց՝ նրա վրա և դրա համար բավականաչափ տվյալներ էլ չկային: Այս կետում որոշ շփոթ են առաջ բերում ընթերցողի տպավորության մեջ մի քանի այնպիսի մոմենտներ, որոնք անմիջապես չեն առնչվում Շուլիզայի հետ: Դա Ֆոմինի հանդեպ երրորդ անձնավորությունների՝ Նադյա Տյուլենինայի, Սերգեյ Տյուլենինի և Վիտյա Լուկյանչենկոյի ունեցած վերաբերմունքն է: Ֆոմինը ընդհանրաբար պիտի անբարենպաստ տպավորություն թողներ Սերյոժկայի վրա՝ վիրավոր մարտիկին իր տունն ընդունելու առաջարկությանը սառը վերաբերվելու համար: Նույնիսկ անկախ այդ հանգամանքից Սերյոժկան իր պատանեկան սուր հոտառությամբ թերևս կարող էր կռահել այն, ինչ որ անհայտ էր մնացել փորձված Շուլիզայի համար: Սակայն հեղինակը՝ բացի այդ, Վիտկա Լուկյանչենկոյի բերանն է գրել «կմատնի» կատեգորիկ պնդումը ի պատասխան Սերյոժկայի խոսքերի, թե ինքը կիմանա ով է թաքնված Ֆոմինի մոտ, նրան առաջաբերելով իր տունն ընդունել վիրավորներից մեկին: Անհամոզիչ են հնչում Սերյոժկային Նադյայի ասած խոսքերը, թե «Ֆոմինը լավ մարդ չի թաքցնի»՝ հեղինակի բացատրությամբ հանդերձ, թե չնայած Ֆոմինը շատ անգամ պարզևատրվել էր ու քաջալերվել, իբրև առաջավոր ստախանովական, նրա

մասին խոսում էին իբրև մութ անձնավորություն: Եթե ընդունենք նույնիսկ, որ հատկապես Ֆոմինի հետ հրամանողների իրականություն մեջ այդպես տեղի է ունեցել, այնուամենայնիվ դա տիպական համարել չի կարելի, քանի որ այդպիսի, շատերին կասկածելի թվացող, մարդը հազիվ թե այդ ժամանակաշրջանում կարող էր գլուխ պահել ազդեցականության ոչ հեռու Առավել ևս այդ մասին չէին կարող չիմանալ այն մարդիկ, ովքեր նրան հանձնարարել էին ընդհատակյա գործիչներին:

Այնուամենայնիվ ոչ այնքան հիմնավոր է այն դիտողությունը, թե Ֆոմինի բացասական գծերի խիստ ընդգծված լինելու հետևանքով տարակուսանք է առաջ գալիս, թե Շուլգան ինչու է գնում նրա մոտ: Վեպում Ֆոմինի այդ բացասական գծերը ամենևին էլ չեն բացահայտվում Շուլգանի համար մինչև նրա ձերբակալությունը: Ահա թե ինչու նա պատճառ չունի Ֆոմինի մոտ չգնալու և գնաց նրա մոտ, որից հետո արդեն պատահականությունը միայն կարող էր փրկել նրան: Այդպիսի աստատակարարություն սակայն տեղի չի ունենում, և նա բանտ է ընկնում:

Եվ այնտեղ, բանտում է, որ երևան է գալիս այս մարդու գյուցադրական բնավորության ամբողջ վեհությունը: Դաժան տանջանքները չեն ընկճում նրա հոգին. ավելի ծանր ապրումներ է բերում նրան ընկերների, թշնամու առաջ իրենց արժանավայել պահող լյուտիկովի ու Պեարովի տառապանքը: Իսկ ամենատանջալիցը նրա համար իր պարտիական պարտքի անկատար մնացած լինելու կեղեքիչ գիտակցությունն է: Նրա հոգեվիճակն այդ օրերին, եթե նկատի առնենք ամենից գլխավորը, կարող է բնութագրվել Նիկոլայ Օստրովսկու խոսքերով՝ «Ապշեցուցիչ գեղեցիկ են մեր ընկերները ֆաշիստներին դեմ-հանդիման. անձնական տառապանքը կետին պլանն է մղվում. գլխավոր ողբերգությունը պայքարի ընդհատումն է»:

Վերջին անգամ Շուլգան ազատություն է տալիս իրեն՝ իր կորովի բնության ամբողջ ուժով գորավիզ լինելով իր հին բարեկամ ու մարտական ընկեր Անդրեյ Վալկոյին, երբ նա մենամարտի մեջ է մտնում սպառազեն ֆաշիստների հետ իրենց սեփական որջում, ոստիկանատանը: Այդ խուլական պոռթկումը, որը անզուսպ հրձվանք է առաջ բերում Շուլգայի և Վալկոյի մեջ, այնքան բնական է նրանց վիճակում և ստեղծագործական այնպիսի ուժգին թռիչքով է նկարագրված հեղինակի կողմից, որ հրձվանք է առաջացնում նաև ընթերցողի մեջ: Իսկ բախտակից ընկերոջ հետ Շուլգայի ունեցած դրան հաջորդող զրույցը հնչում է իբրև մի իսկական խրախուժան, որ գերիշխում է այդ մռայլ իրողության վրա:

Այս բուլղերիկի հոգեկան աշխարհը, որ իր ողջ գեղեցկությամբ երևան է գալիս ընկերոջ հետ ունեցած սրտագին զրույցի ընթացքում, և նրա ազատ ու հուժկու ձայնը, որ վերջին անգամ լսվում է Կրասնոգոնի պարտեղում նոր փորված վիհի առաջ, նրան դասում են այն անմահ դրական կերպարների շարքը, որ մարմնացնում են մեր մեծ դարաշրջանը, մեր վեհապետ ճաղթական ժողովրդին, մեր բուլղերիկյան պարտիան:

¹ Տե՛ս Ա. Դերմանի հոդվածը «Լիաեբաուրնայա զագեալի» 1946 թ. մարտի 23-ի համարում:

² Н. Багдас, С. Трезуб — Счастье Корчагина. 1944 г., էջ 80:

* * *

Անդրեյ Վալկոն, որ Շուլգայի հետ բաժանում է նրա վերջին ժամերը. քիչ տարիքոտ է նրանից, նույնպես քաղաքացիական կռիւների մասնակից։ Նա այն անտեսական ղեկավարների տիպական մի ներկայացուցիչն է, որոնք աճել, բարձրացել են հին Ղազարիների շարքերից ստալինյան հնգամյակների տարիներին։ Նա սակավախոս ու զուտ մի անձնավորութուն է։ Այդ զսպվածությունը նրա խոհականության, ամեն ինչ նախ կշռելու և հետո միայն դրա մասին հետևություն անելու սովորության արտաքին արտահայտությունն է լոկ։ Նա որոշ իմաստով նույնիսկ կասկածամիտ մարդ է. նա հակում ունի ոչ մի բանի անմիջապես հավատ չքնծայել, այլ մանրակրկիտ քննել երևույթը, ինչքան էլ այն արտաքինապես պարզ լինի, և թափանցել նրա էություն մեջ։ Նույնիսկ այն գործիքներն աչքի անցկացնելիս, որ հանքագործներին հանձնելու է բերում մի կարմիր-բանակային, Վալկոն անարդարացիորեն վիրավորում է նրան, հարցնելով. «չհասկացա, ծախում ես, ինչ է...»

Վալկոն կազմակերպված անձնավորություն է, որն իրեն չի կորցնում. ինչպիսի հանգամանքներում էլ գտնվելիս լինի, նա ճշտակատար է ու հետևողական իր բոլոր գործերում։ Նա չի կարող անտարբեր անցնել որևիցե անկազմակերպության ու անկարգության կողքից և իր ամբողջ վարքագծով մարմնացնում է այն մարդու տիպարը, որ կյանքի մեծ դպրոց է անցել մշտապես իրեն նշանաբան ունենալով ընկեր Ստալինի տասնվեց տարի առաջ ասած խոսքերը. «Եթե դու գործարանի դիրեկտոր ես—խառնվիր ամեն մի գործի մեջ, թափանցիր ամեն բանի մեջ, ոչինչ բաց մի թողնի, սովորիր և նորից սովորիր»։

Վալկոն աճուր, անխղիւի կապերով կապված է բանվորական զանգվածի հետ, միահյուսված նրան և խորը հարգված նրա կողմից։ Ծիշտ է, նա նույնպես՝ Շուլգայի նման՝ վատ է ճանաչում ահող սերնդին, բայց հավատում է նրան՝ ժողովրդի նկատմամբ ունեցած իր ընդհանուր հավատի բերումով։

Վալկոն երբեք չի գործում որևիցե քարացած կանոնի հիման վրա. նրա մեջ պեղանտիզմի նշույլ անգամ չկա. նրա ամեն մի քայլը և ամեն մի խոսքը պայմանավորված են նրա խղճով և մարդու արժանապատվության այն ներքին ըմբռնողությամբ, որ տիրապետում է նրա ամբողջ հոգեկանի վրա։

Այն վերջին, վճռական րոպեին, երբ նրա ուղեղում առկայծում է այն միտքը, թե ինքն անցնում է գետը, մինչդեռ իր ընկերները մնում են ափին կանգնած, նա ետ է դառնում և անկարող լինելով հաղթահարել փախչողների հոսանքը՝ լողալով է կտրում գետը, վտանգի ենթարկելով իր կյանքը ոչ միայն առհասարակ (գերմանացիները չէին կարող հանդիստ

1 Տե՛ս «Տնտեսավարների խնդիրների մասին», հառ ուղիալիստական արդյունաբերության աշխատողների առջին համամիութենական կոնգրեսում 1931 թվ. փետրվարի 4-ին։

թողնել նրան), այլև հենց այդ բոլորին: Այդ քայլը միանգամայն հասկանալի է և մաքաչափ անգամ զարմանալի չէ այդպիսի ազնիվ մարդու համար, ինչպիսին է Վալկոն:

Սակայն հարց է առաջ գալիս. թե ինչպես էր գնահատում նա իր այդ ընտելացած ճակատագրական քայլը երբ արդեն ֆաշիստական զեղանում էր: Ձեռքը որ նա չէր կարող հաշիվ չտալ իրեն, որ եթե ետ չդառնար այդ բոլորին, արդեն շատ հեռու կլինեք ռազմաճակատից, գուցե իր ընտանիքի հետ և թերևս նաև կանգնած իր ձեռնարկության գլուխը, որ պիտի վերստեղծվեր նոր վայրում ու այնքան կարևոր դեր խաղար այդ օրերին: Հեյդնակն ինքը դնում է այդ հարցը, երբ գրում է. թե Երբեմն մասնակի, ավելի փոքր, բայց մերձավոր պարտքը գերակշռում է ընդհանուր ու գլխավոր, բայց հեռավոր պարտքի վերաբերմամբ: Արդյոք Վալկոն հետագայում չէ՞ր եկել այն եզրակացության, թե հարկավոր չէր վերադառնալ: Վեպում չկա այդ հարցի ուղղակի պատասխանը: Սակայն այն պահին, երբ Շուլցան դաժանորեն դատապարտում է իր սխալները, Վալկոն ոչինչ չի ասում իր մասին. հետևաբար նա արատավոր չէր գտնում իր վարքագիծն այդ օրերին: Սակայն անկախ դրանից էլ այն ամենը, ինչ մենք գիտենք Վալկոյի մասին, հնարավորություն է տալիս պատասխանել այդ հարցին: Նա իհարկե չէր կարող գիտակցած չլինել, որ եթե չվերադառնար, իր կյանքը կարող էր շատ ավելի օգտակար լինել: Բայց և այնպես նա, Վալկոն, չէր կարող գաղափարել իրեն նրա համար, որ այդ բոլորին ունենդրել է իր խղճի ձայնին և ուղարկության չի տել իր հեռավոր, թեկուզ և գլխավոր պարտքը: Նա հազիվ թե դատեր այլ կերպ, քան գաղափար է Բ. Գոլիցովի «Պատմություն իսկական մարզու մասին» վիպակի հերոսներից մեկը, անվանի վիրաբույժ Վասիլի Վասիլևիչը, որին մորմոքում է իր որդու կոթուսը ռազմաճակատում, որը բժշկական դիա. թեկնածու լինելով՝ թեկունքում կարող էր շատ ավելի օգտակար լինել: Բայց և այնպես նա ասում է, որ եթե նորից վիճակվեր իրեն վճռել—ռազմաճակատ գնա իր որդին թե մնա թեկունքում, ինքը այս անգամ էլ հազիվ թե այլ կերպ վճռեր այդ հարցը: Այդպիսին է և Անդրեյ Վալկոն:

Կոմունիստի արժանապատվության այդ հպարտ գիտակցությունն է, որ դեկավարում է նրան, երբ մայսակեր Բրյուկնեբի՝ Կրասնոզանի հանքերի գլխավոր ինժեների պաշտոնն ստանձնելու առաջարկին նա պատասխանում է ուժգին ապստակ հասցնելով նրան. Հոգեբանական այսօրինակ անդրադարձումը թշնամու կողմից սովետական մարզկանցն արած «դրական» է. հապես չափազանց ստորացուցիչ, առաջարկներին ցայտուն կերպով դրսևորված է մեր գեղարվեստական գրականության մի շարք այլ երկերում ևս. այդպես, օրինակ, Ն. Բիրյուկովի «Վայկա» վեպում պարտիզանուհի Դաչա Լորովան գիշերով անտառում ընկնելով գերժանացի պատժարարների ձեռքը, անվրդով տանում է նրանց բոլոր սպանող լիճները, ժխտելով իր հաղորդակցությունը պարտիզանների հետ: Սակայն նա միանգամից կորցնում է հավասարակշռությունը, երբ ոստիկանապետը փաղաքշական խոսքերով դիմում է իրեն, ու ճչում է. «... Անիծյալ շներ. ոչ մի բան չեմ ասի. չգիտեմ»: Ն. Ֆեոդորովի «Դրաշար Դալին» պատմվածքում՝ Կոզով քաղաքի ապարանի մի բանվոր,

¹ См. Евгений Феодоров—, 8 тмлу врага. Ленинград 1943 г.
Տեղեկագիր 7—2

որը կտրոսել է իր արհեստին, գերմանացու արած առաջարկին՝ մի թոռացիկ շարելու վերաբերյալ, զայրացած պատասխանում է. «շատ կուզեիր, քոսոտ շուն»... Այս հոգեբանական անդրադարձումը շատ տիպական է, քանի որ դրսևորում է պատերազմական իրողության զանգվածային մի երեվոյթը, սովետական մարդկանց զսպված ու հանկարծակի պոռթկացող առեւթույթունը իրենց ազատութունն ու պատիվը ոտնահարող թշնամու հանդեպ: Ահա իրական կյանքում տեղի ունեցած այդօրինակ փաստերից մեկը միայն. Տազանրոզի ընդհատակյա գործիչ Կոնստանտին Աֆոնովը գերմանական քննիչի նույնպիսի քստմեելի առաջարկին, որ նա անում է կարճատև տեսակցության իրավունք ստացած իր կնոջ ներկայությամբ, կարուկ ու շեշտակի պատասխանել է. «ես պարտիզան եմ. ես ուես մարդ եմ, և դրա համար կմեռնեմ... մեաք բարև, Վալյուշա, այլևս քեզ հետ չենք տեսնվի»...¹ Վալկոն պարտիային ու հայրենիքին նվիրված նույնպիսի մարդ է, ինչպես այդ հասարակ մարդկանցից ամեն մեկը, միայն թե նա ավելի մեծ պատասխանատվություն է զգում սովետական պետության բախտի համար, քան նրանք: Դրա համար էլ ավելի բուռն ու անզուսպ է նրա հակազդեցութունը թշնամու ոտնձգությանը:

Մակերեսորեն գիտելու դեպքում կարելի է այնուհանդերձ հակասութուն գտնել նրանում, որ Վալկոն Կոնգրատովիչին խորհուրդ տալով ձևի համար գնալ հանքերը, բայց աշխատել այնտեղ յուրովի, այսինքն կասեցնել արադրութունը, ինքն այնքան խորը վրդովվում է, երբ իր առաջ կարծես թե նույնանման, և անգամ ավելի ընդարձակ հնարավորութուն է բացվում: Օսկայն իրոք այդտեղ ոչ մի հակասութուն չու: Այն, ինչ թույլատրելի էր արտադրության շարքային մարդկանց համար, անթույլատրելի էր աչքի ընկնող դեկավարի, Վալկոյի համար, քանի որ գերմանացիներին նրա նույնիսկ ձևականորեն ծառայելու փաստը կարող էր օգտագործվել թշնամու կողմից ուրիշներին ազակողմնորոշելու համար: Ահա թե ինչու այս դեպքում Վալկոյի խոսքի ու գործի մեջ չի կարելի հակասութուն գտնել: Եւ այլ կերպ վարվել չէր կարող:

Եթե Շուլցայի կերպարում կան առանձին, թող լինի ոչ որոշիչ, գծեր, որոնք տարակուսանք են հարուցում, ապա Անդրեյ Վալկոյի կերպարը ամբողջական է սկզբից մինչև վերջը: Գնչուի պես թիադեմ, թափանցող հայացքով, թիկնեղ այս մարդը իրոք ապրել է Կրասնոդոնում, ուր թանգարանում ամեն մեկը կարող է տեսնել նրա լուսանկարը, և իսկական, հաստատորեն նվաճված հեղինակութուն է վայելելիս եղել ժողովրդի մեջ: Նրան ճանաչողները մեծ հարգանքով են խոսում նրա մասին: Իր կյանքն ավարտել է նա հերոսի մահով, գերմանացի մարդակերների ձեռքով 1942 թ. օգոստոսին կենդանի թաղվելով պարտեղում, իբրև Կրասնոդոնի նահատակ հանքագործների պարագլուխ: Ֆադեևը պատկերել է նրա դիմանկարը շատ նման իրականին և վերստեղծել է նրա դեմքը, իբրև տիպական ներկայացուցիչը բոլշևիկ տընաեսավարների այն պանծալի համաստեղության, որն այսօր էլ, պատերազմի պաճառած ավերումներից հետո, դեպի նոր ծաղկում է տանում մեր երկրի տնտեսությանը:

¹ Տե՛ս Ա. Елагина, «Костер на мусу». Москва, 1945 г., էջ 96.

* * *

Այդպիսի միաձույլ մի անհատականություն է նաև վեպում պատկերված երրորդ աչքի ընկնող բուլղարի, Վորոշիլովգրադի մարզկոմի աշխատող իվան Ֆեոդորովիչ Պրոցենկոն: Նա պատկանում է պարտիական գործիչների հաջորդ սերնդին: 35 տարեկան է նա և չէր կարող մասնակցած լինել քաղաքացիական կռիվներին, բայց դրա դեմաց նա կյանք է մտել այն օրերին, երբ ամբողջ երկիրը համակված էր կառուցողական մեծ պաթոսով, երբ վիթխարի թափ ու ծավալ և համաշխարհային պատմական նշանակություն ունեցող գործեր էին կատարվում: Ու այդ իր որոշիչ կնիքն է դրել Պրոցենկոյի բնավորության վրա: Նա խորապես գաղափարական, նպատակասլաց մարդ է, ճկուն, սրամիտ ու խորաթափանց: Պրոցենկոն ուղղաբար է ու շիտակ: Նա բացձակատ է խստության աստիճանի, բայց և բարի է ու սրտաբաց: Նա ղեկավար է, շրջահայաց և խոհեմ, օժտված մարդկանց ճանաչելու և ամեն մի նոր իրադրություն հստակորեն ըմբռնելու աչքի ընկնող կարողությամբ: Այնուամենայնիվ Լյուբա Շեվցովայի առաջ նրա արած դատողությունները պարտիզանական պատերազմի մասին ոչ լիովին համոզիչ են թվում տվյալ հանգամանքներում:

Վեպում հանդես գալու առաջին իսկ բուլղար (մարզկոմի շենքում Շուբգայի հետ միասին) մինչև ընթերցողի վերջին հանդիպումը նրա հետ, երբ նա նորից երևում է Վորոշիլովգրադի փողոցներում իր «հավիտենական» ԴԱԶ ավտոմեքենայով, Պրոցենկոն պատկերանում է իբրև գործունյա, եռանդով լի ու երջանիկ, իր ուժերին վստահ ու հաջողակ, իր մերձավորներին—կնոջը, մարտական ընկերներին—հարգող ու նրանց կողմից փոխադարձաբար հարգված ու սիրված մի անձնավորություն:

Ի դեմս Պրոցենկոյի, որ որոշ տվյալներից դատելով անձնամոքում է Վորոշիլովգրադի զեկավար պարտիական աշխատողներից մեկին, որն իրոք կապված է եղել երիտասարդ ղվարդիականների հետ ընդհանաակյա պայքարի օրերին, Կրասնոդոնի պատանիները, որ պատկերված են վեպում, մի հիանալի, իմաստուն ու հեռատես խորհրդատու ունեն, որ հազարդակից է դարձնում նրանց բուլղարկյան ավագ սերնդի փորձառությունը:

Վեպում հանդես են գալիս Վորոշիլովգրադի էլի երկու ընդհանաակյա գործիչներ՝ «մարդախույսը», շոգեքարշերի գործարանից, մոտ 70-ամյա մի ծերունի, և երրորդ բուլղարի, որ կապ է պահպանում Լյուբայի և Պրոցենկոյի միջև: Այնտեղ հանդես է գալիս նաև Կրասնոդոնի հին բանվոր Լյուբա Միկոլովը, մի իրական պատմական անձնավորություն, որ դռնվել է Ֆաշիստների տիրապետության օրով, մի մարդ, որ լուսավոր հիշատակ է թողել իր մասին կրասնոդոնցիների սրտում ու շատ ջերմորեն ուրվագծված է վեպում: Սակայն նրանց ինքնուրույն գերը վեպում մեծ չէ:

2

Այս երեք ականավոր բուլղարիներից ամեն մեկը մի կարկառուն անհատականություն է: Նրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր յուրահատուկ փենսական ուղին, իր առանձին շրջապատը, որը և անդրադարձել է նրանց

բնավորութեան վրա: Սակայն նրանց մեջ շատ ընդհանուր գծեր ևս կան և այդ ընդհանուրն էլ հենց ընդհանրացում է սոցիալիզմի հաղթանակի դարաշրջանի և մասնավորապես Հայրենական Մեծ պատերազմի շրջանի բոլշևիկ գործչի ամենահիմնական և գլխավոր հատկանիշները:

Շուլզան, Վալկոն և Պրոցենկոն նախ և առաջ վեհ գաղափարներով տոգորված քաջարի ու կայուն մարդիկ են: Նրանց արյան մեջ է թափանցել լենինյան այն հատկանիշը, որ մատնանշել է ընկեր Ստալինը. մազաչափ անգամ չեն խուճապահարվում նրանք, երբ գործը սկսում է բարդանալ և հորիզոնի վրա որևէ վտանգ է գծագրվում: Իբրև հետ միասին այս բոլշևիկ գործիչները կենսուրախ ու երջանիկ մարդիկ են: Նրանց կենսական գործունեությունն ինքնին նրանց համար անսպառ բավականություն և մշտական ներքին ուրախության աղբյուր է: Կարծես թե երեքի անունից ու նրանց հետ համատեղ հարյուրհազարավոր ուրիշ բոլշևիկների անունից ևն առված Շուլզայի հուզախոով խոսքերը. «Հավիտյանս հավիտենից ես հպարտ կլինեմ, որ բախտ է վիճակվել ինձ, հասարակ բանվոր մարդուս, իմ կյանքի ճանապարհն անցնել մեր կոմունիստական պարտիայի մեջ, անցնել այնպիսի մարդկանց հետ, ինչպես Լենինն ու Ստալինը, որ երջանիկ կյանքի ճանապարհ բաց արին մարդկանց համար»:

Այս անհոգողորդ հավասարակշիռ ինքնավստահությունը և այս հպարտությունը սեփական բախտով՝ հիմնվում են այն անսասան հավատի վրա, որ նրանք ունեն իրենց գործի արդարություն վերաբերմամբ, մի հավատ, որ իր հերթին խարսխվում է պատմական զարգացման օրենքների այն գիտություն վրա, որ նրանք յուրացրել են պարտիական թեորիայից և հասարակության վերակառուցման ու մարդկանց վերափոխման կենդանի փորձից:

Նրանց այդ բոլշևիկյան գործիչների կյանքն ինքնին պատմության մեջ չտեսնված մի աշխատանքային սխրագործություն է: Պատերազմը նրանց համար եղել է «այնպիսի գերմարդկային լարվածության մի անընդմեջ աշխատանքային օր, որ կարող էր տանելի լինել միայն ամրակուռ, դյուցազնական խառնվածքի տեր մարդկանց համար: Ֆիզիկական ու հոգեկան ուժերի ոչ թե շաքարներ ու ամիսներ, այլ տարիներ ու տասնամյակներ տևող այդ ծայրահեղ լարումը այս մարդկանց մեջ առաջ է բերել բացառիկ տոկունություն, իրենց ճանապարհին հանդես եկող ամեն մի արգելքի դիմադարձ լինելու ու այն հաղթահարելու օրգանական սովորույթ:

Իրենց բոլոր կարողությունների այս շարունակական լարումը նաև վերժեցրել է նրանց ոչ միայն թափանցել ամեն գործի էության մեջ, որին վիճակվում էր ձեռնամուխ լինել, այլև միշտ ու ամենուրեք հանդես գալ իրենց գործոն խառնվածքի ամբողջ ուժով: Այդ գործոն եռանդն էլ հենց դարձել է նրանց բնավորության գլխավոր հիմունքը, ինչպես առված է վեպում Շուլզայի մասին:

Նրանց խառնվածքի ընդհանրական մի հատկանիշն է անսովոր կերպով օրված պատասխանատվության գիտակցությունը հանրային պարտքի

¹ Յես Ի. Ստալին — ճշգրիտ Մոսկվա քաղաքի Մոսկիյան բնաբական օկրուգի բնաբաղնիքի նախնաբական ժողովուրդ 1937 թվի դեկտեմբերի 11-ին:

վերաբերմամբ, մշտապես մարտական դիրքում գտնվելու այն զգացողությունը, որ ավելի կամ պակաս չափով հատուկ է նաև ամեն մի շարքային, գիտակից սովետական քաղաքացու համար: Եվ այս դեպքում այն ոգեշնչող օրինակը, որ սնում է նրանց, ինչպես և շատ ու շատ շարքային սովետական մարդկանց, այդ զգացողությունը, պարտիայի ու ժողովրդի առաջնորդ ընկեր Ստալինի անձնավորությունն է: Հիշենք Զոյա Կոսմոգեմյանսկայայի հպարտ պատասխանն իր տանջարարներին. «Ստալինն իր դիրքումն է: Հիշենք «Երիտասարդ զվարդիան» թուղթիկներից մեկի առաջին խոսքերը. «Բաղաքացիներ, հայրենակիցներ, ստում են գերմանացիները: Ստալինը Մոսկվայում է: Պատերազմը չի վերջացել...»:

Մի չափազանց էական հատկանիշ ևս բնութագրում է այս հոգեպետ միաձուլ մարդկանց խառնվածքը — դա նրանց առաձնահատուկ վերաբերմունքն է իրար նկատմամբ: Լինելով անձնվեր մարդիկ, որոնք իրենց հասարակական պարտքին հակասող ոչ մի շահ չունեն, անտրտուն չկրկնվ իրենց վրա ընկած պատասխանատվության ծանր բեռը, պատրաստ լինելով հարկ եղած դեպքում իրենց կյանքը զոհաբերել հանուն ընդհանուր գործի, նրանք, այդ մարդիկ ամենաջերմ շահագրգռություն են հանդես բերում ընկերոջ բախտի վերաբերմամբ, ամենաքնքույշ հոգատարություն նրա նկատմամբ (հիշենք Պրոցենկոյի և Շուլզայի հրաժեշտի տեսարանը, բանտում Շուլզայի ու Վալկոյի ունեցած զրույցի եզրափակումը, Պրոցենկոյի այլաշուով Շուլզայի մահվան լուրն սառնալուց):

«Երիտասարդ զվարդիանում» Ֆադեևը խորն ու ուժգնորեն արատահայտել է մարդկային հորաբերությունների մեր երկրում առաջ եկած նոր ձևերը, այնքան, որքան դրանք տվյալ դեպքում վերաբերում են բուլղիկ գործիչների բարեկամությանը: Դա խոշոր նվաճում է ոչ միայն հեղինակի, այլ և ամբողջ սովետական գրականության համար:

Այդ մեծ բարեկամությունը, որ երևան էր գալիս ու զարգանում էր խաղաղ ժամանակ՝ կենսական ձգտումների ընդհանրության ու նրանց իրագործման համար մղվող միատեղ պայքարի հիման վրա, առանձնակի ձևեր է ընդունում այն բացառիկ հանգամանքներում, ինչպիսիք էին պատերազմը և գերմանական դավթիչների դեմ ուղղված ընդհատակյա պայքարը: Բուլղիկների բարեկամությունը, որ պատկերված է վեպում, արտահայտում է այդ պարագաների համար հատկանշական յուրահաակությունները: Բարեկամությունն այդպիսի պայմաններում առավել ևս անձնվեր, անխղճ ու սրբաառու է դառնում կյանքին սպառնացող ընդհանուր վտանգի շարունակական զգացողության հետևանքով: Պրոցենկոյի զրույցը Շուլզայի հետ հրաժեշտից առաջ, Շուլզայի և Վալկոյի հանդիպման ընթացքում և նրանց զրույցը հաջորդ օրը պատկերում են անկաշկանդ հոգու տեր այդ քաջարի մարդկանց բարեկամությունը հենց այդպիսի բացառիկ, ճգնաժամային հանգամանքներում: Այդ պատկերները իսկական, բարձրաթուիչ ոգեշնչման պտուղներ են, ոգեշնչում, որ հիմնվում է հեղինակի կենսական մեծ փորձի ու հոգեկան խորն ապրումների վրա: Բարեկամության այդ նոր տեսակները, որ վաղուց ուշադիր դիտում էր Ֆադեևը և որոնք խորապես տպավորվում էին նրա մեջ, ամբողջովին հափշտակում են գրողի զգայուն հոգին պատերազմի օրերին, երբ նա շատ անգամ գտնվում էր հաղթանակը դարձնող սովետական մարդկանց հոծ շարքերում: Դիտելով, օրինակ, «Կյանքի ճանա-

պարհի, 1941—42 թ.թ. ձմեռը Լազոգայի սառույցների վրայով Լենին-
գրադին պարենավորող հանապարհի մարդկանց, նա դրել է. «Այդ մարդ-
կանց կյանքը, որ լի է վտանգներով ու զրկանքներով, ցողված էր աշխար-
հում չտեսնված մարդկային հարաբերությունների լույսով: Ոչ մի ավելի
գեղեցիկ բան չկա աշխարհում, քան քաջարի ու ընդհանուր գործի շահե-
րով կապված մարդկանց հարաբերությունները վառագի ժամանակ»¹
Ահա մեկը այն վեհասքանչ պատկերների սկզբնաղբյուրներից, որոնց մեջ
գրողը կադապարել է բուլշևիկների բարեկամությունը «Երիտասարդ գվար-
դիայում»: Նույն ազդյունից են սնունդ առնում այն ոգեպարար խոսքերը,
որ նվիրված են վտանգի մեջ մերձեցած, մոերմացած մարդկանց բաժան-
մանը, որի դառնությունը իրենց սեփական փորձով զգացել են հարյուր-
հազարավոր ու միլիոնավոր սովետական մարդիկ պատերազմի տարիներ-
ին: Շուրջայի և Վալկոյի հրաժեշտի տեսարանը անտարակույս միշտ
կհսկի հասարակ, ազնիվ մարդկանց տշխարհի երեսին, այնքան ողբեր-
գական ու վսեմ է այն իր զարմանալի պարզությամբ հանդերձ:

Ահա թե որտեղ է այդ ամբողջ էությունը իրենց վեհ դադափառնե-
րին նվիրված մարդկանց, Ֆադեևի պատկերած՝ հազթական սոցիալիզմի դա-
րաշջանի բուլշևիկ գործչի՝ կերպարների ուժը:

3

Նրանք, այդ հերոսները հավաքական բնույթ ունեն ոչ միայն այն
իմաստով, որ ընդհանրացնում են մեր դարաշրջանի բուլշևիկի հատկանիշ-
ները: Նրանք հավաքական բնույթ ունեն և այն իմաստով, որ ընդհանրաց-
նում են բուլշևիկի այն վիպական կերպարների կամ բնավորությունների
հատկանիշները, որ վերջին տարիներս ստեղծել են սովետական այլ գրող-
ների իրենց երկերում: Ներկայումս այնքան էլ քիչ չեն դրանք, եթե անգամ
սահմանափակվենք միայն արձակով: Բավական է հիշել գուժարտակի կո-
միսար Բոգարյովի կերպարը Վաս. Գրոսմանի «Ժողովուրդն անմահ է» վիպա-
կից, մինչ պատերազմը մարքսիզմ-լենինիզմի ամբիսնի պրոֆեսոր մի հին
բուլշևիկի, սրի համար դիալեկտիկայի ուսումնասիրությունը «լավ շարային
պատրաստություն է հանդիսացել», ամենախորը համոզմունքների տեր,
հազթանակի նկատմամբ անխորտակելի հավատով լի, համեստ ու եռանդուն,
քաջարի ու անձնվեր, բացտոկ կերպով հավասարակշռված մի անձնավո-
րություն: «Լիտիորեն մեր հոգը խցկված» գերմանացիների դեմ տածած իր
ատելություն ուժով տպավորիչ է, — թեկուզ և ըստ հեղինակի սովորական
գրելաձևի շատ ժլատ գծադրված, — բուլշևիկ ընդհանաակյա գործիչ Ստեպանը,
Տարասի որդին, Բորիս Գորբաշովի «Ջրնկնվածները» մեծատաղանդ վի-
պակից: Լայն, իսկական մարդկային սիրտ է բաբախում Ան. Կալինինի «Հա-
րավում» վեպի հերոս Լուզովոյի կրճքում, այդ լավ հրամանատարի, որ և
լավ ընկեր է ռազմական արշավի ժամանակ ու ամբողջ շրջապատի հա-
մակրանքն է վաստակել: Հափշտակում ու իր հետ տանում է ընթերցողին
Սաբուրովը՝ Կոնստ. Սիմոնովի «Որեր ու գիշերներ» վիպակում, այդ հա-
մեստ, զուսպ, իր վերաբերմամբ խստապահանջ և խստակյաց մարդն ու

¹ А. Фадеев.—Ленинград в дни блокады. Из дневника. 1944 г. № 75.

հրամանատարը: Անմոռանալի է ռայկովի քարտուղար և ապա պարտիզանական ջոկատի հրամանատար Զիմինը Նիկ. Բիրյուկովի «Ջալկա» վեպից իր պարզությամբ ու շիտակությամբ, իր նվիրվածությամբ պարտական պարտքին, իր սիրով դեպի ընկերները և դեպի ժողովրդի բոլոր մարդիկ: Սովետական զեղարվեստական արձակուրդ կան և այլ հերոսներ, որ ավելի կամ պակաս ցայտուն կերպով մարմնացնում են մեր զարաշրջանի բուլղակի աշխատողներին, որ ընդհանրացած են Շուլգայի, Վալկոյի և Պրոցենկոյի կերպարներում: Սակայն թերեւս երկուսը միայն նրանց մեջ իրենց ընդհանրացնող ուժով կարող են համարվել Ֆադեևի «Երկուսուսուրդ զվարդի» կերպարներին:

Դրանցից առաջինն է գնդի կոմիսար Սեմեն Վորոբյովի կերպարը Բորիս Պոլեվոյի «Պատմություն իսկական մարդու մասին» վեպից: Վորոբյովի մեջ, որ պատկերված է զինվորական հիվանդանոցի պալատնեքում, նախ և առաջ աչքի է ընկնում նույնպիսի կաղամկերվածությամբ, կարգ ու կանոնի սեր, ինչպես Վալկոյի մեջ: Նա օժտված է մարդկանց ճանաչելու նույնպիսի ունակությամբ և մարդկանց մերձենալու կարողությամբ (դիտել զգեստն առանց մարդու սրտի բանալին), ինչպես Պրոցենկոն. բայց նրան ամենից ավելի շեշտակի բնութագրում է մշտական ու անզուսպ, կիրք դարձած ձգտումը՝ դրական ներգործություն ունենալու շրջապատի կյանքի վրա ու մասնավորապես օժանդակելու ընկերներին ինչով հնարավոր է, մանավանդ օգնության հասնելու նրանց դժբախտության պահին: Նրա այդ ամենագործոն խառնվածքը երևան է գալիս ոչ միայն ընկերների, հիվանդասենյակում իր հետ պառկած վիրավորների նկատմամբ հուզիչ, կարծես թե ի կատարումն իր պարտականության հանդես բերվող, հոգատարության մեջ (որ ինքնըստինքյան շատ ցայտուն ու համոզիչ է պատկերված): Այդ գործոն խառնվածքը, թերևս, ավելի ուժգնորեն դրսևորվում է այն նամակագրության մեջ, որ համարյա թե մինչև իր վերջին շունչը պահպանում է նա մեր երկրի այլ և այլ կողմերում բնակվող՝ զանազան պրոֆեսիաների ու տարիքի մեծ թվով մարդկանց հետ: Այդ խորունկ, ամրոցվող հոգեկան աշխարհի վրա գերիշխող սերն ու հարգանքը դեպի մարդիկ Վորոբյովին մերձավորում է Շուլգայի հետ, որը նույնպես ակնածանքով ու նույնիսկ հիացմունքով է վերաբերվում ոչ միայն իրեն բախտակից Վալկոյին, այլև այն կոմերիտականներին, որոնց տեսել էր Ելիզավետա Օսմոխիմայի տանը, ինչպես և ուսուցիչներին ու բոլոր սովետական մարդկանց:

Այս մարդասիրության գործոն, հասարակականորեն օգտակար բնույթը Պոլեվոյի գրքում պատկերված է այն ցնցող տեսարանում, որ նվիրված է վիրավորների վերաբերմունքին՝ ասես թե իրենց համար միանգամայն կողմնակի մի դիպվածի՝ պետում խեղդվելու վտանգի ենթարկված ձիու առնչությամբ: Բոլոր ուժերով իր շրջապատի վրա դրական ներգործության ունենալու այդ նույն գործող ձգտումը, այդ հուժկու ներքին պահանջը դրսևորվում է նաև գետի ափին առաջ եկած խառնաշփոթության դեմ մարտի ելած Վալկոյի եռանդուն գործողությամբ:

Կյանքն ինքնին հասարակական ծառայության է այս մարդկանց համար: Սբանից էլ առաջ է գալիս նրանց պաթոսը: Այն տեսարանը Պոլեվոյի գրքում, որ պատկերվում է, թե Վորոբյովին ինչպիսի ազահույսով

հաճախակում ու կարգում է Մովսեսական Ինֆորմբյուրոյի հերթական տեղեկագիրը, ակամա Նիկոլայ Օռարովսկու խոսքերն է հիշեցնում. «Եթե ես ամողջություն ունենայի, անեղբական աշխարհով մեկ շրջելու հնարավորութուն՝ թնչ կլիներ. ես չէի կարող պարզապես քայլել, ես առաջ կվազեի սրընթաց ու անզուսպ... օ՛հ. ես խենթության աստիճանի ազահու-թյամբ կտարեի։ Եվ ինչքան բան կարող էի տալ ես, ինչքան բան կարելի էր կորցել ինձնից նախքան իմ հոգնելը, Խնամյա անշարժությունից ազա-տագրվելով ես ամենամահադիսա մարդը կլինեի»¹։ Հենց ճիշտ այսպիսի, կյանքի վերաբերմամբ անհաղ, ամենամահադիսա մարդիկ են ինչպես Վորոբյովը, Նույնպես և Շուլցան, Վալկոն ու Պրոցենկոն։ Կյանքը նրանց համար եռանդազին գործունեութուն է, ինչպես ասում էր Գորկին և հենց դրանով են գտնում նրանք նրա հաճույքն ու ուրախութունը։

Քնա այն հատկանիշները, որոնցով մերձենում, հարազատ են դառնում իրար մեր դարաշրջանի բոլշևիկ գործիչները։ Նրանց, այդ գեղարվեստա-կան կերպարների կողքին մենք կարող ենք գնել նաև Ռուզնեվին Պետրո Վերշիգորայի «Մախուր խղճով մարդիկ» գրքից։

Սեմեոն Վասիլևիչ Ռուզնեվը, Նույնիսկ այնպես, ինչպես պատկերել է նրան Վերշիգորան, բացի ճշգրիտ իմաստով առհասարակ գեղարվեստա-կան կերպար չէ և անգամ զբաղան հերոս չէ։ Նա եղել է մի առաջ պատ-մական անձնավորություն, Սիգոր Կովալկի նշանավոր պարտիզանական զորամասի կոմիսարը, գեներալ-մայոր, որ արժանացել է Սովետական Միութ-թյան Հերոսի կոչման։ Եվ հենց իբրև պատմական անձնավորություն էլ նա նկարագրված է՝ նրա կյանքի վերջին տարիների վկա Վերշիգորայի կողմից։ Սակայն այնքան տիպական են նրա դիմագծերը, իբրև ստալի-նյան կոփվածքի կադրային բոլշևիկների զսրախմբի մի ներկայացուցչի, որ մարդկային հոգին նրբորեն ըմբռնող այնպիսի օժտված գրողի նկարագրու-թյամբ, ինչպիսին է Վերշիգորան, Ռուզնեվը ասես թե գեղարվեստական կերպարի ուժ և իմաստ է ստացել։ Առավել ես մեծ հետաքրքրություն է ներկայացնում նա Պրոցենկոյի, Շուլցայի, Վալկոյի, ինչպես և կոմիսար Վորոբյովի կերպարների հետ համադրելու դեպքում (այս վերջինս, ի դեպ, Նույնպես Դր իրական նախատիպն է ունեցել, մի մարդ, որ բուժվե-լիս է եղել օդայու Մարեսևի հետ՝ զինվորական հիվանդանոցում), քանի որ Ռուզնեվը որոշ իմաստով կարող է իբրև առարկայական չափանիշ ծառայել։

Ռուզնեվը մի շարքում է գտնվում այդ բոլշևիկ գործիչների հետ նախ և առաջ իր գաղափարական սպառազինու-թյան վիթխարի ուժով, որը և պայ-մանավորում է նրա անդիմադրելի ազդեցությունը մասսաների վրա։ Իսկ այդ, ինչպես հայտնի է, հասարակական գործչի հենց այն հատկանիշն է, առանց որի անհնարին է պատկերացնել ոչ միայն լենինին ու Ստալինին, ոչ միայն Ջերժինսկուն, Կիրովին, Որջոնիկիձեին, Կալինինին, այլև Պտր-աիայի գործիչներից որևէ մեկին։

¹ И. Бателис, С. Трегулов—Счастье Корчагина. 1944 г., էջ 172.

² Պ. Վերշիգորայի գրքի մասին Ե. Ուսիեվիչի գրած մանրամասն ու բովանդակալից հոդվածում արված է Ռուզնեվի հետևյալ բնութագրությունը. «Երա Սովե-տական իրականության հիմնական դեմքն է, այն առաջ մարդկային ախլը, որի մեջ ամե-նից ավելի լիակատար կերպով մարմնացած է պարտիան ու նրա դերը մոդավորի՝ սարկու-թյան դեմ մղած պայքարում» (տես «Ջնամյա» ամսագիր, 1967 թ., № 1, էջ 155)։

Ռուզնեը իրեն շրջապատող մարդկանց տաղանդավոր դաստիարակն է. այս կողմով նրան համեմատում են Մակարենկոյի, հայտնի ռՄԽՍՀ Կոմկոմի ալոբմի՝ հեղինակի հետ. նա, Ռուզնեը, հենվում է ոչ միայն իր համոզմունքի ուժի, այլև մարդկանց մերձենալու, նրանց ներքինը գուշակելու, նրանց հոգու մեջ թափանցելու և այն իրեն ենթարկելու կարծես թե իր համար արդեն պրոֆեսիոնալ հատկանիշ դարձած ունակության վրա։ Դժվար է գերադնահատել Վերչիգորայի գրքի այն տեսարանի նշանակությունը, որտեղ նկարագրված է նրա այցը պարտիզանների վաշտին, որտեղ զլուխ են բարձրացնում իր հաստատած պարենավորման կարգից զժգոհ քրեական ժարերը։ Բուլդեիկի՝ իբրև մասսաների դաստիարակչի, այս հատկանիշը նույնքան ընդունելի է և կոմիսար Վորոբյովի և Ֆադեևի Պրոցենկոյի համար և, պետք է կարծել, նաև Վալկոյի համար, թեկուզ և մենք քիչ ենք տեսնում նրան անմիջական շփման մեջ՝ մասսայի հետ, բայց կոհանում ենք նրա այս հատկանիշը շրջապատողների վերաբերմունքից (հիշենք Օլեգի ու Ջեմսուխովի խոսքերը նրա մասին)։

Սակայն Վալկոն, ինչպես և Շուլգան, թերևս ավելի սերտորեն մերձենում են Ռուզնեիին՝ իրենց անձնական օրինակով մարդկանց ոգեշնչելու և առաջ տանելու ընդունակությամբ, որ վերջինիս աչքի լիննող հատկանիշն է։

Նույնքան էական է Ռուզնեի համար նաև գործունեության հարատև ծարավը, որ բնութագրում է նաև Ֆադեևի հերոսներին։ Նա նույնպես, ինչպես և նրանք, հաճույք ու երջանկություն է գտնում իր եռանդի անկաշկանդ, բուռն գրսևորման մեջ։ Նրա համար անտանելի է որևէ անգործություն, անշարժ վիճակ. մասնավորապես բարձր տրամադրություն է համակում նրան երթի մամանակ, ինչպես Վալկոյին՝ ոտքով հրասնդոհ վերադառնալիս։

Ի վերջո Ռուզնեի վրա ամենաշեղծ համակրանք է առաջ բերում հասարակ սովետական մարդկանց նկատմամբ ունեցած իր անհուն հարգանքով, Երիտասարդ, քիչ պարծենկոտ պարտիզան Ջերոլովի հեռ ղրուցելիս նրա ասած ոգեշնչելի խոսքերը թիկունքի աշխատավորների մասին թերևս ավելի խորն են թափանցում մարդու հոգու մեջ, քան նույնիսկ տպավորվում է հոնստանտին Սիմոնովի «Հավարտ մարդը» վիպակի գեղադասական հերոս ինժեներ Նիկոլսկին, որն իր գործունեությամբ նույն զաղափարն է խորհրդանշում¹։ Ռուզնեի վրա բառացի ասում է. «Այն մայրը, որի երեքից—հինգ երեխաները քաղցած են մնում, իսկ ինքը առավոտից գիշեր փամփուշտ, հաց, գիմնաստյոբկա է պատրաստում քեզ համար, այնպիսի հերոս է, որի առաջ դու պիտի ծունկ չոքես, Վոլոդյա... և ոչ մի բանով, ռազմական ոչ մի հերոսությամբ դու նրանից վեր չես բարձրանա...»։

Սովետական հասարակ մարդկանց վերաբերմամբ նույնպիսի հիացմունքը հատուկ է նաև Շուլգային, որ գտնում է, թե ոչինչ չկա աշխար-

¹ Տես «Գրավադ» 1945 թ. № 1—3, Հիշատակելի է, որ պատերազմի օրերին Սիմոնովի գրած այդ վիպակը ջերմ ընդունելություն գտավ Սովետական երկրի խորը թիկունքում, ինչ որ արտահայտվել է այն փառաբանումով, որ 1945 թ. սկզբին, դեռ մինչև Մոսկվայում տոնածին գրքույկով հրատարակվելը, այն լույս է ընծայվել անդերում մի քանի հրատարակությամբ և դրանց թվում հրաշոյարակում, Արականում, Վորոնեժում։

հույս գեղեցիկ, քան թե նա, որ անտրտուն չտարել է ամենածանր զրկանքներ քաղաքացիական կռիվների ու վերակառուցման տարիներին ու Հայրենական պատերազմի օրերին:

Ի վերջո մի կարևոր առանձնահատկություն ևս պետք է նշել Ռուդենկի բնավորության մեջ: Այդ դաժանության ու քնքշության առաջին հայացքից զարմանալի համատեղումն է այդ ամբողջական, միաձուլ մարդու հոգում: Երբ վաշտերից մեկի հրամանատարը, լավ համարում ունեցող մի պարտիզան, խախտելով ստացած հրամանը, վաանդի է ենթարկում զորական ամբողջ միավորումը և ստալինյան առաջադրանքի կատարումը, Ռուդենկի, չնայած շարի անդամների և նույնիսկ իր՝ Լուկակի տատանմանը, անհողող է մնում: Ինքը թելադրում է նրա ղեկավարության հրամանը, վերցնում նրանից շքանշանը և ներկա գտնվում հրամանի զործադրմանը: Իսկ քիչ հետո, երբի ժամանակ, Ռուդենկին, այդ երկաթակուռ մարդուն, տեսնում են դառնորեն լաց լինելիս: Դաժանության ու քնքշության այդպիսի համատեղումը բնորոշ է նաև Ֆադեևի ներուճների համար: Հիշենք, թե Շուլգան ինչպիսի՜ քնքշությամբ է վերհիշում Լիզո Ռիբալովային ու փայլատակող աչքերով այն պատանիներին, որ նրա տանն էին, ինչպիսի՜ դուրդուրտնքով է վերաբերվում Շուլգային Վալկոն, այդ խստաբարո մարդը, ինչքան քնքուշ է Լյուբայի վերաբերմամբ Պրոցենկոն, այն մարդը, որ զենքը ձեռին բաց կովի մեջ անխնա ոչնչացնում էր գերմանացիներին: Այդ մարդկանց դաժանությունը այն հանգամանքների թելադրանքն է, որոնց մեջ նրանք գտնվում են, իրենց հասարակական պարտքի թելադրանքը, որ՝ օլահանջում է ոչնչացնել նենդ, տմարդի թշնամուն ու դեն չպրտել ճանապարհից այն ամենը, ինչ խանգարում է դրան. մինչդեռ նրանց քնքշությունը, նրանց հոգու մեղմությունը երևան է հանում նրանց իսկական, իրական դեմքը, նրանց խորը մարդկայնությունը:

Շուլգայի, Վալկոյի և Պրոցենկոյի կերպարների նույնիսկ ոչ համակողմանի այս համադրումը նույնանման հանգամանքներում, թշնամու թիկունքում, և միևնույն ժամանակաշրջանում գործած պատմական անձնավորության Ռուդենկի հետ, որի գործունեության փաստերը ճշգրտությամբ են նկարագրված, շատ ավելի լավ, քան որևիցե վերացական դատողություն, հաստատում է այդ գեղարվեստական կերպարների ճշմարտացիությունն ու կենսունակությունը: Եվ եթե գեո ոչ այնքան վաղուց ամեն հիմք ունենալով կարելի էր պնդել, թե մեր դրականության մեջ դեռ չկա «Հայրենական պատերազմի բոլորիկի ամբողջական կերպարը, որի մեջ լայն ընդհանրացումը համադրվեր միանգամայն կոնկրետ, լիարյուն մարդկային բնավորության հետ»,¹ ապա ներկայումս, երբ մենք ունենք Շուլգայի, Վալկոյի ու Պրոցենկոյի, ինչպես և Կոմիսար Վորոբյովի կերպարները, արդեն այդ բանը պնդել մենք չենք կարող: Ծիշտ է, այս գրական հերոսները ևս դեռ չեն կարող համարվել ամենայն բազմակողմանիությամբ ներկայացված ծավալուն կերպարներ, որոնք մարմնացնեն մեր դարաշրջանի բոլորիկին

¹ Յու. Լ. Սյուբոցկի—Черты характера большевика в художественной литературе. «Партийное строительство», 1945 г., № 20.

նրա կենսական կապերի ու հարաբերությունների քննարկարար դրսևորումներով:

4

Սակայն մեր դարաշրջանը մարմնացնող այդ կերպարները, ինչպես և նրանց հարակից դրական այլ հերոսները, իրենց նախապատմությունն ունեն. նրանք դրական դարդացման մի ամբողջ երկարատև պրոցեսի պտուղն են հանդիսանում: Երբ մենք խոսում ենք բոլշևիկի կերպարի մասին, չենք կարող մոռացություն տալ, որ նրա սաղմնավորողը եղել է Մաքսիմ Գորկին: Ճարական սև ոեակցիայի տարիներին նա աշխարհին ավել է Պավել Վլասովի կերպարը իր «Մայր» վեպում, որը ջերմորեն ողջունել էր Վ. Ի. Լենինը և որը մինչև այժմ էլ իր դերն է խաղում ոչ միայն սովետական ժողովրդի նոր սերունդների, այլև Եվրոպայի ժողովուրդների դաստիարակության գործում: Իր ժամանակին այդ գեղարվեստական մի մեծ դյուտ էր: Տվյալ դեպքում Գորկին չունեի իր գրական նախորդները, եթե հաշվի չառնենք Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպում հանդես բերված ունուցիոներ-ռազնոչինեցի տիպը, որ իր ժամանակի համար նույնպիսի դյուտ լինելով ազդեցություն է գործում հասարակական մտքի վրա մինչև մեր օրերը: Սակայն Գորկին Պավել Վլասովին և վեպի այլ կերպարները կերպելիս շատ նվազ չափով էր ելնում դրականությունից. նա ելնում էր կյանքից: Նրա հերոսները «Մայր» վեպում, որ վերապատկերում է Սորմովոյի գործարանի՝ Դորկուն լավ ծանոթ շրջապատը, ունենին իրենց նախատիպերը, որ իրական պատմական անձնավորություններ էին: Պրոպ Լևդեկին Չալոմովը, Պավել Վլասովի նախատիպը, որին մոտիկից դիտել էր Դորկին Սորմովոյի 1902 թ. ցույցի ու դատավարության ժամանակ, նույնպիսի կենդանի պատմական անձնավորություն էր, ինչպես Կրասնոդոնում սպանված Վալկոն: Պատմության այդ կենդանի հերոսին է, որ իր միս ու արյունով դրականության մեջ փոխադրեց Գորկին, գեղարվեստականորեն ընդհանրացնելով նրան, սակայն պահպանելով նրա բոլոր էական գծերը:

Հետագայում Գորկին տվեց մեր գրականությանը ցարիզմի շրջանի ինտելիգենտ բոլշևիկ գործչի ծավալուն կերպարն ի դեմս Ստեպան Կուտուզովի՝ «Կյանք» Սամգինի կյանքը դուրսագնացությունների մեջ: Նա վերաստեղծեց նաև Վ. Ի. Լենինի մինչ այժմ էլ չգերազանցված պատկերն այնքան ջերմորեն ու լայն ընդգրկումով գրած իր հիշողություններում, որը գեղարվեստական ընդհանրացման նշանակություն է ստացել: Սակայն սովետական դարաշրջանի բոլշևիկի, պարտիական դործչի, ժողովրդական զանգվածների կազմակերպչի լիարժեք կերպարի սանդղման գործը բաժին ընկավ սովետական պրոդների հաջորդ սերնդին:

1918—21 թ.թ. քաղաքացիական պատերազմին նվիրված գրականությունը, որ հրապարակ եկավ 1922—27 թվականներին, ավելի մաս-

¹ Հարավ-Սլավոնիայի կոմերիտիության մեջ առաջիցիս է դարձել, որ նոր ընդունվողը պետք է կարդացած լինի Գորկու «Մայրը» և Նիկոլայ Սարգսեյու «Ինչպե՞ս էր կոփվում սլոգանատը»: Տե՛ս Նաապյա Տեպսի «Պավել Կուչազինը արտասանեցի՞նք հետաքրքրական հոդվածը (սեպտի միտ ամսագիր, 1946 թ., № 11—12):

սաների կազմակերպչի մի քանի պայծառ կերպարներ ու նրանց թվում Ա. Սերաֆիմովիչի ու Դմ. Ֆուրմանովի ժողովրդական դարձած զրքերի (Սրկաքե Էեդեդ, «Զապալ») հերոսներին, Յու. Լիբեդինսկին իր վիպակներում («Կոմիտեներ», «Սաքաթ») պատկերեց քաղաքացիական կռիվներին մասնակից բոլշևիկի հիմնական հատկանիշները:

Բայց և այնպես բոլշևիկի այնպիսի կերպարի ստեղծումը, որ սոցիալիստական շինարարության ամբողջ դարաշրջանը մարմնացնեի, մեռում էր անկատար: Այդպիսի դրական հերոս ստեղծելու կարևորագույն խնդիրը սովետական գրականության առաջ նոր ուժով դրեց Մաքսիմ Գորկին քսան տարի առաջ: Միևայրիվ Վիլոնովի մասին գրած իր նշանավոր հոդվածում Գորկին գրում է այդ ականավոր պրոլետարի ու լենինյան պարտիական գործչի վերաբերյալ, թե «նա տեսնում էր ապագայի հզոր մարդկանց հասարակությանը, հերոսներին մարդկությանը, հերոսների, որ դարգացել հասել են տիեզերական հսկաների աստիճանի: Բր հոդվածը Գորկին եզրափակել էր հետևյալ նշանակալից խոսքերով. «Երկար ժամանակ գուրգուրանքով պահեցի ես նրա հիշատակը, շարունակ ուղուժ էի ինչ-որ առանձնապես լավ գրած լինել նրա մասին, բայց շատ դժվար է գրել այդ տիպի մարդկանց մասին և ուսու գրողի դրիշն էլ չի սովորել դեռ պատկերելիսկական հերոսներին: Հավանական է, որ շուտով սովորեն»¹:

Գորկու այդ կոչի կարծես թե առաջին արձագանքը հանդիսացավ այդ օրերին լույս տեսած՝ այն ժամանակ երիտասարդ գրող Ալեքսանդր Ֆադեևի «Ջախջախում» վեպը: Այդ վեպի կենտրոնական հերոս Լևինսոնը, որ շնորհիվ այն լայն ընդհանրացմանը, որին հասել է գրողը, սովետական գրականության մեջ երկար ժամանակ համագոր էր բոլշևիկի հասկացողությանը, անմիջականորեն ձայնակցում է «Երիտասարդ գվարդիայում» հանգես եկող բոլշևիկների կերպարներին:

Օսիպ Աբրամովիչ Լևինսոնը, այդ փոքրիկ անբարետես մարզը «միայն մի բան գիտե—գործը»: Բրեն շրջապատողների աչքում նա «ուղղամիտ մարդ է», «հատուկ տեսակի մտրդ», ինչպես արտահայտվում է նրա մասին իր օգնական Իսկլանովը, որ շարունակ հիանում է նրանով ու ձգտում նրան նմանվել:

Լևինսոնի ամբողջ կյանքը հանուն լուսավոր ապագայի մղված պայքարի անընդհատ շղթա է եղել, որ սպառազինել է նրան մեծ իմաստություն մը և ուժով. «ոչ, ես այնուամենայնիվ ամուր տղա էի... ևս ոչ միայն շատ բան էի ցանկանում, այլև շատ բան էի կարող—այս է ամբողջ խնդիրը»—խորհրդածում է նա ինքն իր մասին:

Լևինսոնը, այդ մեծ մարզը, որը դեռ շատ թուլություններ ունի իր ներսում, իր ամբողջ էությունը ապագայումն է. նա մի անձնավորված երազանք է հանդիսանում. «... Լևինսոնը հուզվում էր,—գրում է հեղինակը,— քանի որ այն ամենը, ինչ նա մտածում էր, այն ամենախորունկ ու ամենակարևոր բանն էր, որ նա կարող էր մտածել, քանի որ այս ամբողջ չքավորության և աղքատության հաղթահարման մեջ էր հենց իր սեփական կյանքի իմաստը, քանի որ չէր լինի ոչ մի Լևինսոն, այլ կլինեի մի

¹ Տես «Պրավդա», 1927 թվի մայիսի 5-ի հոմարը:

ուրիշը, եթե նրա մեջ ապրելիս չլինե՞ր նոր, գեղեցիկ, ուժեղ ու բարի մարդու իղձը, որ անբաղդատելի է որևէ այլ ցանկության հետ: Բայց ի՞նչ խոսք կարող է լինել նոր, գեղեցիկ մարդու մասին մինչև այն ժամանակ, քանի դեռ վիթխարի միլիոնները հարկադրված են ապրել այնպիսի նախնազարյան ու խղճուկ, այնպիսի անբընականելիորեն աղքատիկ կյանքով:

Ի դեմս Շուլգայի, Վալկոյի և Պրոցենկոյի Ֆադեևը գտավ, ձեռք բերեց այդ նոր մարդուն, որ երազ էր իր և Լևինսոնի համար:

«Երիտասարդ զվարդիա»-ի մեջ մենք տեսնում ենք այսօրվա Լևինսոններին, Դեռ ավելին, մենք այնտեղ ունենք, ասես թե, հենց իրեն՝ Լևինսոնին ոչ միայն հերոսի պատմա-հասարակական դերի իմաստով, այլև այն կենսական հանգամանքների կրկնության իմաստով, որոնց մեջ գործում էր Լևինսոնը, նրանցից բխող հոգեվիճակների կրկնությամբ հանդերձ: Լևինսոնը կարծես հառնել է և նույնիսկ երիտասարդացել «Երիտասարդ զվարդիայում» ի դեմս Պրոցենկոյի: Եթե կուզեք, «Ջախջախում» վեպի ամբողջ սյուժեն խտացված կերպով ընդգրկված է «Երիտասարդ զվարդիայում» Պրոցենկոյի ղեկավարած պարտիզանական ջոկատի գերմանացիների դեմ մղած կռվի ու նրտ ելքի մեջ, որ համանման է «Ջախջախման» վերջավորությանը: Այդ էլ հենց բարենպաստ հնարավորություն է ստեղծում պարզելու այդ երկու հերոսների մեջ եղած ընդհանրությունը ու նրանց միջև եղած տարբերությունը: Եվ այդ դեպքում մենք առաջին հերթին նկատում ենք, որ շատ ավելի բան կա, որ մոտեցնում է նրանց, քան թե ատարբերում, բաժանում իրարից: Այդ երկու մարդկանց բնության ամենակարևոր ընդհանուր հատկանիշը նրանց պատասխանատվության այդ գիտակցությունն է իրենց հանձնարարված գործի համար: Լևինսոնի համար, որ ջախջախված է տեսնում իր ջոկատը, պատասխանատվության գիտակցությունն է փրկարար խարիսխ հանդիսանում: «Գետը էր ապրել ու կատարել իր պարտականությունները»: Պրոցենկոյին ևս հոգեպես շատ ավելի կեղեքում է այն գիտակցությունը, որ նույնիսկ եթե հաջողի դուրս գալ օղակումից, իրենց գործը՝ միևնույն է՝ ձախողված է, քան թե պատասխանատվության զգացումը մարդկանց կյանքի համար, քան իր և իր կնոջ ոչնչացման պատկերացումը:

Նրանք երկուսն էլ, թե Լևինսոնը և թե Պրոցենկոն շատ կազմակերպված ու նպատակորոշ մարդիկ են, որ արագ կողմնորոշվում են խճճված հանգամանքներում: Ուժեղ է Լևինսոնը վայրկենապես, ինչպես փայլակ, նրա մառում ծնունդ առած՝ ճահիճը լցնելով անցուղի պատրաստելու վճռով: Ճիշտ այդպես Պրոցենկոյին ևս հաջողվում է գտնել ու սրընթաց կերպով իրագործել իր նույնպես ջախջախված ջոկատի փրկության միակ հնարավոր եղանակը:

Թե Լևինսոնը և թե Պրոցենկոն ուժեղ կամքի տեր մարդիկ են, որ ընդունակ են ամենախորն ազդեցություն գործել իրենց շրջապատի վրա: Լևինսոնին, որ միշտ ընթացել է ուրիշների առջևից, նույնիսկ եղջեր է պատկերացնել իրեն, որ մի ժամանակ, պատանեկության օրոք ինքն ուրիշ կերպ է եղել:

Այնուամենայնիվ Լևինսոնն ու Պրոցենկոն միանգամայն տարբեր մարդիկ են: Ջնայած այն բոլոր հուռախարություններին, որ ապրել է, ու այն ամբողջ դաժանությանը, որ տեսել է Լևինսոնը կյանքում, նա այնուամեն-

նայնիվ մեղմ, երազկոտ բնավորություն տեր մարդ է մնացել: Նա ներողամտորեն է վերաբերվում ոչ միայն փուչ Մորողկային, այլև՝ «անհուսալի» որեն շփոթ դիվի տեր» Մեչիկին, այս «անպտուղ ծաղկի» և նրա նման «ծուլ» ու անկամ մարդկանց՝ մեջ տեսնելով լուրջ այն պայմանների արդյունքը, որոնց մեջ նրանք ապրել են: Պատահում է, որ իրեն Լեոնտոնին ևս, ճիշտ է, աներևակայի Ֆիդիկական հողնածություն ու հույեկան ցընցման ազդեցությամբ, մի պահ տիրում է կատարյալ անտարբերություն ամեն ինչի նկատմամբ, անգործության ու նույնիսկ անօգնականության զգացում:

Այդ նոր մարդն անհայտությունից չի ելել, նա չի հրեացել իբրև դրողի երևակայության արգասիքը: Այդ մարդը ելել է նոր կյանքի հետ, իբրև կրողը և ստեղծագործողը վերափոխված կյանքի, իբրև նրա դիտակից կառուցողն ու գերիշխան տերը: Նա ինքն աճել ու բարձրացել է այդ կյանքի հետ միասին: Նրա կյանքն ինքնին երկրի հասարակական կառուցվածքի մեջ կատարված ուղղացիայի պատմությունն է, սոցիալիստական տնտեսության ու մշակույթի ստեղծման պատմությունը: Շուլգայի ու Վալկոյի հիշողություններն իրենց նախընթաց կյանքի մասին միանգամայն անխզելի են երկրի աճման, սոցիալիզմի աճման պատմությունից: Նրանց՝ մահվանից առաջ ունեցած դրույցի մեջ, որ այնքան բնական է տվյալ հանգամանքներում, ինչպես գեղարվեստի միջով, անցնում են մեր աչքի առաջից մարդկության համար շրջադարձային 1917 թվականը, երբ Մատվեյ Շուլգան ունկնդրելով լեոնտոններից մեկին, Լեոնտոն Ռիրալովին, առաջին անգամ ճաշակում է ժողովրդին ծառայելու երջանկությունը, երբ Վալկոն, դիմվոր ճակատայինների պատվիրակը, առաջին անգամ տեսնում է մեծ Լեոնտոն Սովետների 2-րդ համագումարում, ու նույնիսկ «մոտենում նրան ու շոշափում ձեռքով» և զորացրվելով՝ գնում հանքերը վերականգնելու և ածուխ տալու Մոսկվային և Պիտերին:

Վերհիշում է Շուլգան և ընդհատակյա պայքարը, և պարտիզանական կռիվը, և չքափորական կռիվներն ու պարենհարկը, նեպն ու լենինյան առաջադրանքը՝ «սովորիր առևտուր անել»: Վերհիշում է նա կոլեկտիվացման նշանավոր ժամանակը, երբ ամբողջ ժողովուրդը շարժման մեջ էր և «չգիտեին էլ, թե երբ են քնում» մինչև այն օրերը, «երբ ամենահետամնաց մարդն էլ զգաց այն տարիների մեծ արդյունքը» ու «խկապես սկսեցին լավ ապրել պատերազմի նախօրյակին»: Վերհիշում է Վալկոն հնգամյակների տարիները, երբ հազար ու մի դժվարություն հազթահարելով սովորեցին կառուցել գործարաններ, որ «կոկիկ ու գեղանի են, ինչպես ժամացույց» և հառնում են նրա աչքերի առաջ գրոհային գիշերները, երբ մի քանի ամիս շարունակ հանքահորում էր գիշերում:

¹ Տարակուսանք է առաջ բերում «Ներհայտարար» զվարդիայի մասին գրված գրախոսական հոդվածներից մեկում (Ա. Դերմանի վերհիշյալ հոդվածը «Լիտերատուրնայա դոգեալում») եղած դիտողությունը «անտեսողների» ինքնաբերականության իբր թե «թիմարիկ» լինելու և Շուլգայի ու Վալկոյի խոստովանության իբր թե ավելի հանգամանքների չհամապատասխանելու մասին: Ճշմարտությունն անշուշտ բնկ. Ս. Տրեգուրի կողմն է, որ գրել է. թե այդ հանգամանքներում Շուլգան և Վալկոն «պիտի դրուցելն հենց այն, ինչ որ գրված է» (տե՛ս «Ոկայար» ամսագրի 1946 թ. № 5-ում նրա հոդվածը «Ներհայտարար» զվարդիայի մասին):

Ահա թե ինչու, երբ Վալկոն ասում է՝ «մեր տնտեսավարը հսկա է», այդ ամենն ինչի զարմացնում մեզ, քանի որ իրական փաստի սոսկական արձանագրումն է լուկալիստական շահերի և նրա զարմանքը. «Աստված վկա, հիմա, երբ ես ևս նայում, չես էլ հավատում, թե իրոք մենք ինքներս ենք արել այդ. երբեմն, ազնիվ խոսք եմ ասում, թվում է, թե ոչ թե ինքս եմ արել այդ բոլորը, այլ իմ մի մտիկ ազդականը»։ Վալկոն իրավացի է. նա և «իմ մտիկ ազդականը» դա պատմական միևնույն անձնավորությունն է, հաղթանակած սոցիալիզմի գարաշը շանի բուլղերի, այն նոր մարդը, որ աճել է ռևոլյուցիայի և սոցիալիզմի աճման հեռավոր սին, բարձրացել ժողովրդի բուն խորքից, ներծծել իր մեջ նոր հասարակարկի վերափոխիչ ուժը¹։

Այս առումով, իրենց անխզելի միասնությունը ժողովրդի ու նրա կյանքի հետ Շուլգան և իր ընկերները բուլղերի-լենինյանների հին գվարդիայի ուղղակի և իրավագոր ժառանգորդներն են։ Ֆելիքս Ջերժինսկին ևս նույնանման հանդամանքներում գտնվելով գրել է. «բանտը սարսափելի է նրա համար, ով հոգով տկար է»։ «Իմ հոգու ուժը բավական է էլի հազար տարի, գուցե և ավելի, բոլոր ժամանակներում, քանի որ իմ դերեզմանի վրա ծաղիկներ կաճեն, ծաղիկները պտուղներ կտան, պտուղները՝ սերմեր, ապա սերմերից նորից ծաղիկներ կբացվեն ու այդպես անվերջ...»²։

Ժողովրդի, նրա կյանքի հետ միաձուլվելու և այս ոգեշնչող գիտակցությունը բնութագրում է նաև Շուլգայի դեմքը։ Գրողը գեղեցիկ պատկեր է գտել այս գաղափարը մարմնացնելու համար. «կանգնել էին նրանք իբրև երկու եղբայր—կաղնի՝ դաշտի վրա», գրում է նա Վալկոյի և Շուլգայի մասին։ Եվ երբ հրաժեշտի րոպեին Պրոցենկոն ասում է՝ «ես խոտի պես կենտոնակ եմ, դու քեզ պահպանիր, կոստիկիչ», իսկ Շուլգան ժպտալով պատասխանում է նրան՝ «իսկ ես անմահ եմ», այստեղ ոչ մի սեթևեթանք չկա, ոչ էլ սա սոսկ կատակ է. այս մարդիկ լրջորեն հավատում են իրենց անմահությանը, որովհետև հավատում են իրենց շուրջը համախմբված ժողովրդին։ Եվ արվեստագետի հաղթանակը հենց նրանումն է, որ ընթերցողը ևս հավատում է Վալկոյին ու Շուլգային, նա տեսնում, զգում ու նորից համոզվում է, որ նրանք, այդ բուլղերի գործիչները «նույնպես, ինչպես Անթոնյը, ուժեղ են նրանով, որ կապ են պահպանում իրենց մոր, մասսաների հետ, որ ծնել. սնուցել ու դաստիարակել են նրանց՝ և քանի գեո նրանք կապ են պահպանում իրենց մոր, ժողովրդի հետ, նրանք բոլոր շանսերն ունեն անպարտելի մնալու» (Ստալին)։

¹ «Երկու բուլղերի մահվանից առաջ ունեցած զրույցի մեջ աբսուրդական է մեր պարտան, ինչպես մի կաթիլի մեջ աբսուրդական է աբսուրդականը—կարդում ենք մենք «Երեսուցի»-ի գեղարվեստական մասին գրված հոդվածներից մեկում (Ս. Տրեգուբի հոդվածը «Գրատիյան» շաբաթաթերթի առաջին 1946 թվի № 4-ում), և այդ առիթով միանգամայն հիմարիտ է»։

² Տես նրա՝ իր քրոջը, Ա. Ե. Բուլգակին, հովելի բանալի 1898 թ. հունվարի 18-ին գրած նամակը, ապագրված «Կոմունիզմ» պարբերականում 1948 թ. սեպտեմբերի 20-ին։

³ Տես իր կնոջը Ալդանային՝ Սեդիցի բանալի 1901 թ. հոկտեմբերի 8-ին գրած նամակը նույն ազգում։

Մատվեյ Շուլգային ամենախուրդ կերպով տանջում է իր զրության անելանելիությունն այն պատճառով, որ որևիցե հնարավորություն չկա իր մահը գոնե ուսանելի դարձնելու ուրիշների համար, որպեսզի «մարդիկ չկրկնեն իր սխալները»։ Եվ երբ բախտն ընկերացնում է նրան մի մարդու, «որի հետ նրան մոտեցնում էին ավելի մաքուր ու անխղելի կապեր, քան որևիցե այլ կապեր աշխարհում», դաժան խոսքեր է դնում իր վրիպումները դատապարտելու համար։

Այդ խոստովանության մեջ մեծ ուժգնությամբ երևան է գալիս բուշևիկի խառնվածքի այն էական կողմը, որ արմատացել է պարտիայի առաջնորդների, լենինի ու Ստալինի կողմից ամենայն հետևողականությամբ արված շարունակական ներշնչումների շնորհիվ։ այդ՝ ճշմարտությանը ռաց աչքով նայելու սովորություն է, իր գործած սխալները անխնա երևան բերելու, նրանց սկզբնապատճառների վերաբերյալ իրեն հաշիվ տալու և ապագայի համար նրանց ունեցած նշանակությունն ըմբռնելու ներքին պահանջը։ Շուլգան, ինչպես և իր զրուցակիցը, Վալկոն, շատ լավ գիտեին, որ իրենց ժամերը հաշված են և կարող է թվալ, թե նրանք այլևս ոչ մի կարիք չունենին իրենց հաշիվ տալու անուղղելի մասին։ Սակայն հենց նրանում է Շուլգայի ուժն ու վեհությունը, որ նա չի էլ ենթադրում կյանքից հեռանալ, իբրև նավարկության ենթարկված, ջախջախված մի մարդ։ Նա ամենևին էլ չի փսկում իր հաշիվը աշխարհի հետ։ Իր ամբողջ կյանքում նա վարժվել է հենվել անցածի վրա՝ ապագան պատկերացնելու և ավելի վստահորեն դեպի այն քայլելու համար, քանի որ նա միշտ դիտել է իրեն իբրև ժողովրդի աշխատող, որ առաջնորդում է նրան, և ամեն ինչ տվել է այդ ժողովրդին, նրա երջանիկ ապագան կառուցելու գործին։

Մահվան դատապարտված անմեղ, աղնիվ ու քաջարի մարդու նրբորեն նշմարված ու նկարագրված այս հոգեբանական վիճակը, ի դեպ, այստեղ առաջին անգամը չէ հանդես գալիս Ֆադեևի ստեղծագործության մեջ։ «Վերջին Ուղեհիմն» վեպի երրորդ գրքում զնդանում տանջահարվող Ռզնատ Սայենկոն—Պտաշկան—նույնպես «տառապագին» փսոսում էր, որ «այժմ, երբ ինքն իմացավ այդ ամենը, այլևս չի կարող ընկնել կենդանի մարդկանց շրջանը, քանի որ ընկերների մոտ և պատմել նրանց այդ մասին»։ Պտաշկան երկյուղ էր կրում, որ իր ընկերները, որոնք ապրում ու պայքարում էին այնտեղ, երկրի վրա, դեռ մինչև վերջը չեն հասկանում «այդ և հաշվահարգարի վճռական ժամին նրանց սրտերը կարող են մեղկանալ խղճահարությունից և նրանք անողորմ չեն լինի այս հրեշների նկատմամբ և այս հրեշները նորից ու նորից կխաբեն նրանց ու կճգմեն, կոչնչացնեն ամեն կենդանություն աշխարհի ելեսին»։

Պտաշկայի, հասարակ բանվորի գիտակցության մեջ այս ամբողջ իմաստությունը հասունանում է տանջարարների՝ իր նկատմամբ ցույց տված սմարդի, գաղանային վերաբերմունքի ազդեցությամբ և դրանով նա մի տեսակ վեր է բարձրանում ինքն իրենից, սպառնալիքներ է մինչ այդ իրեն անձանոթ ու անմատչելի մնացած հոգեկան դրահով։

Իսկ Շուլգայի համար, ինչպես մենք կաբող հենք եզրակացնել, դատելով այն ամենից, ինչ գիտենք նրա մասին, այդ խոհերն ավելի օրգանական բնույթ ունեն։ Դրանք հիմնված են նրա ամբողջ նախընթաց կենսական փորձի վրա, տառնամյակների ընթացքում կազմավորված նրա աշխար-

հայացքի ու աշխարհադպացման վրա: Դրա համար էլ Շուլգայի այս ապրումները ավելի բնական ու հասկանալի են, քան Պատշկայինը, որոնք իրենց հերթին նույնպես հիմնավորված ու համոզիչ են թվում:

Ֆադեևը Շուլգայի կերպարում, նրա աղետալի ճակատագրում և նրա անողոք ինքնաքննադատության մեջ երևան է հանում այնպիսի պակասություններ, որ միայն Շուլգային չէ, որ հատուկ են: Շուլգայի ծանր ապրումներում Լիզա Ռիրալովայի և Գոնդրատովիչի վերաբերմամբ ունեցած իր կասկածների համար և Իգնատ Ֆոմինին տաժաժ վստահության համար (որ Վալկոն լակոնիկ բնորոշում է—«թուղթ», «ձև») նա քննադատում է այս մարդու որոշ թերմբոնումս իր անմիջական շրջապատի մարդկանց: Դրանք, այդ ապրումները, ամեն մի բոլշևիկի ու ամեն մի սովետական աշխատողի ուղղված կրքոտ հույս են պարունակում իրենց մեջ՝ ավելի ուշադիր ունկնդրել հասարակ սովետական մարդկանց ձայնին, թափանցել նրանց հոգու մեջ, հաղորդակից լինել նրանց կյանքին, իմանալ նրանց կարիքները և նախ և առաջ հավատով վերաբերվել սովետական մարդուն, նրա վեհությանը, հպարտությանը կրել սրտում ժողովրդի աշխատողի պանծալի կոչումը: Այս առումով Շուլգայի կերպարի հասարակական իմաստը նաև նրանումն է կայանում, որ այն մարմնացնում է տաս տարի առաջ ժողովրդի ընտրյալների մասին ընկեր Ստալինի ասած պատմական խոսքերի ողջ հրատապ, կենսական նշանակությունը մեր հետագա պատմական առաջխաղացման տեսակետից:

Ի վերջո Շուլգայի և Վալկոյի կերպարների մեջ ընթերցողը չի բաց չդիտել խոշոր գրողի կրքոտ կոչը և դարաշրջանի հրամայական պահանջը, ուղղված կյանքում փորձված բոլշևիկներին՝ դառնալ երեսով դեպի նոր սերունդը, ավելի սերտորեն մերձենալ վերջին տասնամյակում աճած սովետական հիանալի երիտասարդությանը, իրենց բաժինը մտցնել այդ սերնդից բոլշևիկյան փառապանծ հին գվարդիայի արժանավոր փոխարինողներ դաստիարակելու գործում:

Հնդհանուր առմամբ Շուլգայի, Վալկոյի և Պրոցենկոյի կերպարները «Երիտասարդ գվարդիայում»՝ դրողի համար, սուրեկափվորեն, մի ամբողջ տրիումֆ են հանդիսանում, քանի որ նրանց մեջ նա մարմնացած է գտել իր երազը հերոսի, ուժեղ ու ազատ մարդու վերաբերյալ, երազ, որ այնքան վառ կերպով արտահայտվել է Լևինսոնի մեջ «Ջախջախում» վեպում:

Սակայն այդ կերպարները մի նշանակալից առարկայական նվաճում են ամբողջ սովետական գրականության համար: «Երիտասարդ գվարդիայում» տրված բոլշևիկի կերպարները խորհրդանշում են մեր գրականության զարգացման մի մեծ ու կարևոր հանրագումարը:

Իսկ այս հանրագումարը, որ անդրադարձնում է սովետական հասարակության աճումը, սովետական մարդու աճումն ու սոցիալիզմի հաղթանակը, որ հավերժացվեց Հայրենական Մեծ պատերազմի փառավոր ելքով, սոցիալիստական հանրակարգի, մեր կոմունիստական պարտիայի գաղափարական հաղթանակն է հանդիսանում:

«Երիտասարդ գվարդիայում» պատկերված բոլշևիկների կերպարները կարևորագույն գեղարվեստական նորումներ, արվեստի բնագավառում կատարված մի մեծարժեք գյուտ են հանդիսանում: Համաշխարհային գրականության մեջ չկան այնպիսի հերոսներ, որոնք ժողովրդի ծոցից դուրս եկած

և այդ նույն ժողովրդի վստահութեան շնորհիվ նրա ղեկավարները գիւրջին հասած հասարակ մարդիկ լինելով, այնքան շոշափելի պարզ ու համոզիչ կերպով մարմնացնեն իրենց անմահութիւնը շնորհիվ իրենց միաձուլութեան այդ ժողովրդի հետ ու աննկուն հավատի այդ ժողովրդի նկատմամբ և շնորհիվ իրենց անհայտագործութեան՝ առաջ տանելու նրան մինչև նվիրական նպատակը, համաշխարհային կոմունիստական հասարակութիւնը, որ դարձել է մի կենսական պահանջ ու մոտավոր հեռանկար, անխուսափելի՝ պատմութեան առարկայական ընթացքի ուժով:

Դրանուհետեւ մենք անհամաձայն ձեռքերի վեպում եղած ռուլլեիկների կերպարների թե կենսունակութիւնը, թե նորարարական էութիւնը և թե նրանց պատմական նշանակութիւնը: